

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան

[լրացնել ամսաթիվը]

[**Լրացնել կազմակերպության անվանումն ու կազմակերպչաիրավական ձևը**] (պետական գրանցման համար՝ [լրացնել համարը], պետական գրանցման ամսաթիվ՝ [լրացնել ամսաթիվը], ՀՎՀՀ՝ [լրացնել ՀՎՀՀ-ն], հասցե՝ [լրացնել հասցեն]) (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս **տնօրեն/լիազորված անձ** [լրացնել տնօրենի կամ լիազորված անձի անունը, ազգանունը], ով գործում է ընկերության կանոնադրության/լիազորագրի հիման վրա, մի կողմից, և

«Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամը (պետական գրանցման համար՝ 222.160.941725, պետական գրանցման ամսաթիվ՝ 16-ը հունվարի 2017 թվական, ՀՎՀՀ՝ 02656976) (այսուհետ՝ «Նվիրառու») ի դեմս տնօրեն՝ Վարուժան Ավետիքյանի ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին հետագայում նաև՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Սույն պայմանագրով Նվիրատուն պարտավորվում է Նվիրառուին նվիրաբերել տարեկան [թվերով] (տառերով) ՀՀ դրամ գումար:
2. Սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված պարտավորությունը գործում է՝
 - [.] տարի ժամկետով¹
 - անժամկետ
3. Նվիրատուն նվիրաբերության գումարները Նվիրառուի հաշվին է փոխանցում Պայմանագրի ստորագրումից հետո 1 տարվա ընթացքում՝ ազատ գրաֆիկով:
4. Նվիրատուն նվիրաբերության գումարը պետք է փոխանցի սույն կետում նշված ռեկվիզիտներով: Որևէ այլ հաշվին կատարված փոխանցումը համարվում է չկատարված նվիրաբերություն:

Ստացող՝ **Զինծառայողների ապահովագրության Հիմնադրամ**

Ստացողի հաշվի համարը՝ **103008661003**

Ստացողի բանկի անվանումը՝ **Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ**

5. Նվիրառուն Նվիրատուի ցանկությամբ պարտավորվում է սույն պայմանագրի շրջանակներում կատարվող նվիրաբերությունների փաստի մասին հրապարակել իր պաշտոնական վեբ կայքում:
6. Սույն պայմանագիրը կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, իսկ վեճերի լուծումը վերապահված է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարաններին:
7. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 2-րդ կետում նշված ժամկետը, իսկ եթե այն կնքվել է անժամկետ, ապա պայմանագիրը լուծելու վերաբերյալ Նվիրատուի կողմից Նվիրառուին ծանուցելու պահից 3 ամիսը:
8. Նվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին 3 ամիս առաջ գրավոր ծանուցելով Նվիրառուին:
9. Նվիրառուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին 1 ամիս առաջ գրավոր ծանուցելով Նվիրատուին:
10. Սույն պայմանագրի շրջանակներում կատարված բոլոր ծանուցումները կատարվում են սույն պայմանագրում նշված հասցեներով կամ կողմերի միջև փոխանակված էլեկտրոնային փոստի հասցեներով: Ընդ որում, էլեկտրոնային փոստով կատարված ծանուցումները համարվում են պատշաճ ծանուցում:

¹ Նվազագույն ժամկետը մեկ տարի է:

11. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
12. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ

[Լրացնել կազմակերպության անվանումն ու
կազմակերպարավական ձևը]

Հասցե՝ [լրացնել հասցեն]

ՀՎՀՀ՝ [լրացնել ՀՎՀՀ-ն]

Տնօրեն/Լիազորված անձ՝ [լրացնել տնօրենի
կամ լիազորված անձի անունը, ազգանունը]

(ստորագրություն)

ՆՎԻՐԱՌՈՒ

«Զինձառայողների կյանքին կամ
առողջությանը պատճառված վնասների
հատուցման» հիմնադրամ
Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
ՀՎՀՀ 02656976
Բանկ՝ ՀՀ Կենտրոնական բանկ

h/h՝ 103008661003

Տնօրեն՝ Վարուժան Ավետիքյան

(ստորագրություն)